42. ՆԵՐՔԻՆ ՍՂՆԵՔ

Գյուղի եզրին, ձորաբերանին կա մի հին գերեզմանատուն՝ հասարակ տապանաքարերով.

502. ***ՏԱՊԱՆԱՔԱՐԻ*** *վրա խաչ և տակին՝*

Թ ՌԽ Թ(ՎԻՆ) :ՌԽ: (1591):

43. ՂԱՐԱԲՈՒԼԱՂ ԳՅՈՒՂ

Գյուղամիջում հին հուշարձաններ չկան։ Այս և Ավետարանոց ու Վերին Թաղավարդ գյուղերի արանքում, մի բարձր բլրի վրա գտնվում է Ղևոնդյանց կամ տեղական բարբառով Ղոնդիկ անապատը։ Անապատի ներկա շենքերը և նրանց արձանագրությունները վերաբերում են XIX դարին։ Ավերակների մեջ կան մի քանի հին խաչքարերի և ճարտարապետական մասերի բեկորներ, սակայն առանց արձանագրության։

Գյուղից հարավ-արևմուտք, մոտ չորս կիլոմետր հեռու, գտնվում է, Հովհաննես անունով մատուռը, որի արևմտյան մուտքից վեր ագուցված փոքր խաչքարի վրա մնում է հետևյալ արձանագրությունը.

503.



Թ ՌԿԷ
Պտրոս

ԽԱՉՍ ՄՈՒ|ՂՏԱՍԻ| ՄԱՐՏԻ|ՐՈՍԻ. Թ(Վ)Ի(Ն). :ՌԿԷ: (1618).| Պ(Ե)ՏՐՈՍ.

Ծանոթ. Պետրոսը *հավանաբար խաչքարը կազմող վարպետն է։*

44. ԱՎԵՏԱՐԱՆՈՑ ԿԱՄ ՉԱՆԱԽՉԻ ԳՅՈՒՂ

Գյուղի Ավետարանոց անունն ավելի հին է և ավանդաբար կապվում է Վաչագան Թագավորի հետ, որն իբր նեղվելով պարսից Պերոզ Թագավորից, մի ավետարան դրկած, առանձնանում է այս գյուղը և որպես ճգնավոր անցկացնում իր օրերը։

Գյուղի երկրորդ ծաղկումը կապված է մելիքական շրջանի հետ, երբ այն դառնում է Վարանդայի մելիքների նստոցը։ 1682 թվականին կովկասյան լեռնականներն ավերում են Սևանա լճի ավազանի գյուղերը։ Այդ ժամանակ Շահնազարյանների տոհմից Մազրայում նըստող Մելիք Հուսեյինը իր եղբորորդի Մելիք Բաշիի հետ վերցնելով իրենց ենթակա ժողովրդի մի մասին, քոչում և հաստատվում են Ավետարանոց գյուղում, ապա պարսպապատելով գյուղը, այն դարձնում ուժեղ ամրացված բերդ ու Վարանդայի մելիքանիստ ավան։

Այս գյուղից էր XIX դարի ռուսական բանակի նշանավոր գեներալ Մադաթովը, որը հետագայում դարձավ Ավետարանոցի տերը և այնտեղ հիմնեց իր ապարանքը։

Ավետարանոց գյուղը ականատես է եղել բազմաթիվ պատերազմների և արյունահեղությունների, որոնցից արժանահիշատակն է 1733 թվականին կատարված դեպքը։ Թուրք-պարսկական պատերազմների այդ տարին Ավետարանոցում էր տեղավորված տաճկական մի զորաբաժին՝ Սուլեյման բեկի հրամանատարությամբ, որը ավերածություններին միացնում էր նաև հայ կանանց պատիվն արատավորող իր ցինիկ գործարքները։ Ժողովուրդը չհանդուրժելով դրանք, ոտքի է կանգնում և մի գիշերվա ընթացքում Մելիք Հուսեյինի կին Աննայի և